ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐՄԱՆԱՅԻ ՀԱՅԱԳԵՏ ՀԵՐՄԱՆ ԳՈԼՑԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՀԵՐՄԱՆ ԳՈԼՑ, ՈՐ Ի ՀԱԼԼԷ, ԳԵՐՄԱՆԻԱ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ջերմ ողջոյնն ու սրտաբուխ բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ հայ ժողովրդի ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սիրելի բարեկամիդ:

Մեծարգոյ Տիար Հերման Գոլց, գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Դուք երկար տարիներ Ձեր աստուածահաճոյ գործունէութեամբ, հեղինակած բազմաթիւ գրքերով ու հրապարակումներով, կազմակերպած միջոցառումներով համաշխարհային գիտական եւ հասարակական լայն շրջանակներին ներկայացնում էք հայ ժողովրդի ազգային արժէքները եւ ամենայն սիրով ու նախանձախնդրութեամբ ծառայում հայագիտութեան զարգացմանը:

Ձեր նուիրեալ ջանքերի արդիւնքն է Հալլէի համալսարանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց Գիտական-Աստուածաբանական Կենտրոնի հիմնադրումը, որի շնորհակալ գործունէութեամբ համբաւաշատ կրթօջախի բազմաթիւ ուսանողներ այսօր հաղորդ են դառնում հայոց լեզուին, պատմութեանն ու մշակոյթին:

Որպէս անուանի հայագէտ ու մտաւորական, Դուք Ձեր արդիւնաշատ ներդրումը բերեցիք նաեւ Հայաստանում Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակի դարակազմիկ յոբելեանը տօնախմբելու գործում՝ Գերմանիոյ Հալլէ քաղաքում կազմակերպելով «Հայաստան -2000» խորագրով գիտաժողովը եւ Կիլիկիոյ հայ արուեստի ցուցահանդէսը՝ նուիրուած մեր ժողովրդի քրիստոնէական անցեալին ու ստեղծած հոգեւոր հարուստ ժառանգութեանը: Բազմաթիւ մտաւորականներ մասնակցեցին յոբելեանական այս միջոցառումներին՝ առաւել հանգամանալից ծանօթանալով հայ ժողովրդի մշակոյթի ու արուեստի բարձրարժէք գործերին, որոնք ծնունդ առած առ Աստուած հաւատով եւ առ մարդը սիրով, եղել եւ շարունակում են լինել բարութեան եւ հոգեւոր ներշնչումի անսպառ աղբիւր:

Բարձր ենք գնահատում նաեւ անուանի մտաւորական եւ մեծ մարդասէր, Վերապատուելի Յոհաննէս Լեփսիուսի յիշատակը վառ պահելու, ինչպէս նաեւ 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի նկատմամբ իրականացուած ցեղասպանութեան վերաբերեալ նրա բազմահազար փաստաթղթերից կազմուած արխիւը առաւել մատչելիօրէն հանրութեանը ներկայաց-

նելու Ձեր նախաձեռնութիւնը: Ի սփիւռս աշխարհի բնակուող հայորդիների համար անչափ թանկ ու հարազատ է Յոհաննէս Լեփսիուսի անունը, ով մարդկային ազնուութիւնն ու արդարութեան սէրը իր հոգում, իր կարելին ներդրեց յանուն հայ ժողովրդի պաշտպանութեան եւ Մեծ եղեռնի դատապարտութեան:

Մեծարգոյ Տիար Հերման Գոլց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից առանձնակի ուրախութեամբ բերում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենախնամն Աստուած, որ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն, ստեղծագործական նոր ներշնչանքներ, աւիւն ու կորով, որպէսզի Դուք շարունակէք գիտական եւ մանկավարժական Ձեր աստուածահաճոյ արդիւնաշատ գործունէութիւնը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 2-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 115